

Տեղեկատվություն
Հայաստանի Հանրապետության կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության
2014 թվականի միջոցառումների ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին

	Միջոցառման անվանումը	Կատարված աշխատանքը	Ֆինանսական ապահովումը
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն			
1.	«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում:	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվել և սահմանված կարգով 20.12.2014 թվականի N ԱԱ/ԳԳ-1/10568-14 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման պետական քաղաքականության ծրագրերի մշտադիտարկման և տեղեկատվության փոխանակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:	Ֆինանսավորում չի պահանջվել
2.	Պետական ծառայողների որակավորման բարձրացման, կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ գիտելիքների հաղորդման նպատակով՝ «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնահարցեր» թեմայով քաղաքացիական ծառայողների (բարձրագույն, գլխավոր, առաջատար, կրտսեր պաշտոնների համար) վերապատրաստման դասընթացներ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2008 թվականի հուլիսի 8-ի N 567-Ա որոշմամբ հաստատված ծրագրով, որի շրջանակում վերապատրաստվել են բարձրագույն, գլխավոր, առաջատար, կրտսեր պաշտոնների 51 քաղաքացիական ծառայողներ, որից 28-ը՝ գլխավոր և բարձրագույն, իսկ 23-ը՝ առաջատար և կրտսեր:	Տարվա ընթացքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից իրականացվել են «Գենդերային հիմնահարցեր» թեմայով քաղաքացիական ծառայողների (բարձրագույն, գլխավոր, առաջատար, կրտսեր պաշտոնների համար) վերապատրաստման դասընթացներ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2008 թվականի հուլիսի 8-ի N 567-Ա որոշմամբ հաստատված ծրագրով, որի շրջանակում վերապատրաստվել են բարձրագույն, գլխավոր, առաջատար, կրտսեր պաշտոնների 51 քաղաքացիական ծառայողներ, որից 28-ը՝ գլխավոր և բարձրագույն, իսկ 23-ը՝ առաջատար և կրտսեր:	ՀՀ պետական բյուջե

	յության խորհրդի 2008թ. հուլիսի 8-ի N567-Ա որոշմամբ հաստատված ծրագրի:		
ՀՀ արտաքին գործերի նախարարություն			
3.	ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի համաձայն պարբերական զեկույցների ներկայացում:	2014 թվականի ընթացքում ՀՀ ԱԳՆ համակարգմամբ գործող միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից նախապատրաստվել և ՄԱԿ-ի համապատասխան հանձնաժողովին է ներկայացվել «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն ներկայացվող Հայաստանի Հանրապետության հինգերորդ և վեցերորդ համատեղ պարբերական զեկույցի նախագիծը:	Ֆինանսավորում չի պահանջվել
ՀՀ մշակույթի նախարարություն			
4.	«Լավաշի և ազգային ուտեստի՝ «Էրգրի համի հիշողություն» փառատոնի կազմակերպում:	2014 թ. հոկտեմբերի 18-ին ՀՀ Արագածոտնի մարզի Նոր Արթիկ համայնքում անցկացվել է «Լավաշի և ազգային ուտեստի՝ «Էրգրի համի հիշողություն» փառատոնը, որի ընթացքում ներկայացվել է մարզի 10 համայնքների 110 կանանց պատրաստած ազգային ուտեստների ավելի քան 50 տեսականի:	ՀՀ պետական բյուջե, Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն			
5.	Հանրակրթական դպրոցների, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների, փոխտնօրենների և մանկավարժների որակավորման բարձրացում՝ ուղղված նրանց գենդերային մտածելակերպի ձևավորմանը և գենդերային գիտելիքների հաղորդմանը:	Լրամշակվել է «Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը» թեմայով վերապատրաստման փաթեթը, որը դրվելու է ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի կողմից՝ կրթության ոլորտի մասնագետների համար անցկացվող վերապատրաստումների հիմքում: Ինչպես նաև գենդերային հիմնահարցերի վերաբերյալ թեմատիկ նյութերը ներառվել են տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների և «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչների վերապատրաստման մոդուլում: Միաժամանակ «Գենդերային հիմնախնդիրների դրսևորումները և դրանց կանխարգելման քայլերը» թեման ներառվել է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների, փոխտնօրենների և մանկավարժական աշխատողների վերապատրաստման դասընթացների ծրագրում:	Ֆինանսավորում չի պահանջվել
6.	Հանրակրթական դպրոցի սովորողների շրջանում կանանց և տղամարդկանց իրավահավասարությանը վերաբերող թեմաների ուսուցում:	Հանրակրթական դպրոցի 8-12-րդ դասարաններում «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման ընթացքում սովորողները իրազեկվում են կանանց և տղամարդկանց իրավահավասարությանը վերաբերող թեմաների շուրջ:	Ֆինանսավորում չի պահանջվել
7.	Սովորողների մոտ մասնագի-	«Դաստիարակչական աշխատանքը դպրոցում. մասնագիտական	Ֆինանսավորում չի պահանջվել

	տական կողմնորոշման հարցերում իրազեկվածության բարձրացում՝ ուղղված գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը, աղջիկների և տղաների շրջանում իրենց սեռի համար ոչ ավանդական մասնագիտությունների նկատմամբ մոտիվացիայի ձևավորմանը:	կողմնորոշման խնդիրներ» օժանդակ ձեռնարկը կիրառվել է հիմնական դպրոցում: Դասղեկների կողմից դասղեկական ժամերի ընթացքում սովորողները իրազեկվում են մասնագիտական կողմնորոշման հարցերի շուրջ՝ ուղղված սեռի հատկանիշով կարծրատիպերի հաղթահարմանը, աղջիկների և տղաների շրջանում իրենց սեռի համար ոչ ավանդական մասնագիտությունների նկատմամբ մոտիվացիայի ձևավորմանը: Երևանում կազմակերպվել է «Կրթություն և կարիերա» եռօրյա ցուցահանդեսը: Ցուցահանդեսի նկատմամբ մեծ հետաքրքրություն են դրսևորել հատկապես երիտասարդները, ովքեր փորձում են տեղեկանալ, գտնել իրենց համապատասխան մասնագիտություն: Ցուցահանդեսին մասնակցել են Հայաստանում և արտասահմանում գործող 73 կրթօջախներ՝ բուհեր, քոլեջներ, ուսուցման կենտրոններ, ինչպես նաև միջազգային դոնոր կազմակերպություններ:	հանջվել
8.	Հանրապետության 12 տարածաշրջանային քոլեջներում գործող կարիերայի կենտրոններում սովորողների շրջանում մասնագիտական կողմնորոշման խնդիրների վերաբերյալ դասընթացների ու խորհրդատվությունների անցկացում:	Հանրապետության 12 տարածաշրջանային քոլեջներում գործող կարիերայի կենտրոններում անցկացվել են միջոցառումներ՝ սովորողների շրջանում մասնագիտական կողմնորոշման հետ կապված խնդիրներին, մասնագիտական կրթության ոլորտում գործող մասնագիտություններին, աշխատաշուկայում մասնագիտությունների առկա պահանջարկին ծանոթացնելու, ինչպես նաև մասնագիտության ընտրության հարցում աղջիկների և տղաների մոտ սեռի հատկանիշով կարծրատիպերի հաղթահարման նպատակով: Մասնավորապես, կազմակերպվել է 12 տարածաշրջանային քոլեջներում գործող կարիերայի կենտրոնների պատասխանատուների վերապատրաստում: 12 տարածաշրջանային քոլեջների և կարիերայի ուղղորդման կենտրոնների միջև համատեղ աշխատանքի արդյունավետությունը գնահատելու նպատակով, Եվրոպական Կրթական Հիմնադրամի փորձագետի խորհրդատվությամբ մշակվել են մոնիթորինգային ցուցանիշներ: Բացի 12 տարածաշրջանային քոլեջներից, 2014 թվականին ընտրվել են նաև 10 ՄԿՈԻ հաստատություններ, որոնց հետ իրականացվում են աշխատանքներ՝ կարիերայի ստորաբաժանումների ներդրման և զարգացման ուղղությամբ: Ընտրվել են վերոնշյալ ուսումնական հաստատությունների կարիերայի կենտրոնների համար պատասխանատուներ: 2014 թվականին Վայոց ձորի մարզային զարգացման կենտրոնում ՀՀ ԿԳՆ, ԵԿՀ և Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոնի համատեղ ջանքերով գործնական ուսուցման բաղադրիչը խթանելու նպատակով՝ կազմակերպվել է «Գործնական ուսուցումը՝	Ֆինանսավորում չի պահանջվել

		ճանապարհի դեպի զբաղվածություն» թեմայով սեմինար: Եղեգնաձորում իրականացվել է «Կողմնորոշում, կրթություն, ապագա աշխատանք» խորագրով արտադրության ցուցադրման բաց դռների օր, դասախոսություն, սեմինար՝ Եղեգնաձորի պետական քոլեջի մասին հանրության իրազեկվածության և վարկանիշի բարձրացման, մասնագիտական կրթություն-աշխատաշուկայի հնարավորությունների բացահայտման նպատակով: Երևանի տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի կարիերայի 2 պատասխանատուները մասնակցել են ՀՀ ԱՍՀՆ կողմից կազմակերպված և իրականացված կլոր-սեղան քննարկումներին:	
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն			
9.	Գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում կանանց մասնակցության հնարավորությունների ընդլայնմանն ուղղված միջոցառումների իրականացում:	1. «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում 2014 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության 6 մարզի 24 համայնքում ստեղծվել է «Համայնքի արոտօգտագործողների միավորում» 24 սպառողական կոոպերատիվ, որոնց անդամների ընդհանուր թիվը կազմում է 4309, որից՝ 868-ը կին անդամներն են: Կոոպերատիվն օգնում է կին անդամներին բարելավել աշխատանքային պայմանները՝ հնարավորինս մեքենայացնել ձեռքի աշխատանքը, բարձրացնել գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը, որի արդյունքում արտադրական գործունեությունից ստացվող եկամուտները կավելանան շուրջ 15-20%-ով: 2. «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության 10 մարզերում իրականացվում են 53 դրամաշնորհային ծրագրեր, որոնցից կանանց մասնակցությամբ կամ ղեկավարությամբ իրականացվում են 13 դրամաշնորհային ծրագիր: 53 դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ընդգրկված են 210 ուղղակի շահառուներ, որոնցից 37-ը (շուրջ 18%) կանայք են: Նշված 13 ծրագրերից 6-ում կանայք ընդգրկված են ոչ ֆորմալ ֆերմերային խմբերում, 4 ծրագրերում՝ ՍՊԸ-ում, 1-ինում՝ սպառողական կոոպերատիվի անդամներն են, իսկ 2-րդում հանդես են գալիս որպես անհատ ձեռներեցներ: Կանանց մասնակցությամբ իրականացվող ծրագրերում մեկ ծրագրի հաշվով միջինը ստեղծվել է 6-7 աշխատատեղ: Իրականացված ծրագրերի շնորհիվ գործող ֆերմերային տնտեսությունների եկամուտներն ավելացել են 25-55%: Ծրագրերի ընտրության արդյունքում, հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում է այն ծրագրերին, որտեղ մասնակցում են կանայք:	ՀՀ պետական բյուջե, Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ

		3. ՀՀ կառավարության կողմից հաստատված «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգին» համապատասխան՝ 2014թ. գյուղատնտեսության ոլորտին տրամադրվել են մատչելի տոկոսադրույքով (14%-ով) վարկեր, որոնց 4 տոկոսային կետը սուբսիդավորվել է, իսկ հանրապետության առավել կարիքավոր 225 համայնքների համար սուբսիդավորվել է վարկերի տոկոսադրույքի 6 տոկոսային կետը: 2014թ. տրամադրվել է 14.34 մլրդ դրամի 14.5 հազ. միավոր վարկ, որից 19.9%-ը եղել են կին վարկառուներ: Մատչելի պայմաններով վարկերի տրամադրումը նպաստել է հանրապետությունում էլ ավելի մեծ թվով կանանց ներգրավվածությանը գյուղատնտեսական գործունեությանը և կին ձեռներեցների գործունեության խթանմանը:	
ՀՀ առողջապահության նախարարություն			
10.	Բնակչության ռիսկային խմբերում ոչ վարակիչ հիվանդությունների (հիպերտոնիա, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ) վաղ հայտնաբերման և կանխարգելման սկրինինգային ծրագրերի իրականացում:	ՀՀ բնակչության ռիսկային խմբերում նախատեսվում է իրականացնել ոչ վարակիչ հիվանդությունների (հիպերտոնիա, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ) զանգվածային սքրինինգներ՝ ուղղված այդ հիվանդությունների վաղ հայտնաբերմանը, վերահսկմանը և մահացության նվազեցմանը: Սքրինինգային գործընթացի մեկնարկը նախատեսված է 2015 թվականի հունվարից: Հիպերտոնիայի և շաքարային դիաբետի սքրինինգների մեջ ընդգրկված է կանանց և տղամարդկանց 35-68 տարիքային խումբը: Արգանդի պարանոցի քաղցկեղի վաղ հայտնաբերման նպատակով ընդգրկված է կանանց 30-60 տարիքային խումբը: Երրորդ տարվա վերջում վերոնշյալ սքրինինգների իրականացման կատարողականը պետք է լինի առնվազն 50-60 տոկոս: 2014թ. սքրինինգային ծրագրերի նախապատրաստման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները. 1. ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտի հետ կնքված պայմանագրի շրջանակներում մշակվել են «Արգանդի պարանոցի նախաքաղցկեղային վիճակների վաղ հայտնաբերում, վարում և քաղցկեղի կանխարգելում» և «Ոչ վարակիչ հիվանդությունների կառավարում և բուժում» գործնական ուղեցույցները, որոնք հաստատվել են ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի ապրիլի 16-ի թիվ 810-Ա հրամանով: 2. Վերոնշյալ ուղեցույցները տպագրվել են 1700 և 1400 օրինակով և ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի օգոստոսի 13-ի թիվ 1953-Ա հրամանի համաձայն բաշխվել են ՈՎՀ և ԱՊՔ վերապատրաստումներում ընդգրկված բժշկական անձնակազմին: 3. Մշակված ուղեցույցների և կրթական նյութերի հիման վրա 2014 թվականի հուլիսի 22-ից Երևանում և ՀՀ մարզերում ՀՀ ԱՆ առողջապահության	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ

		ազգային ինստիտուտի կողմից իրականացվել են ԱԱՊ օղակում աշխատող բժշկական անձնակազմի հնգօրյա վերապատրաստումները, որոնք ըստ պայմանագրի ավարտվել են 2014 թվականի նոյեմբերի 19-ին: Վերապատրաստումները կազմակերպվել են Երևանում և ՀՀ մարզերում, որոնցում ընդգրկվել են ԱԱՊ օղակի շուրջ 2700 բժիշկներ: 4. Մշակվել է մոր և մանկան առողջության (ՄՄԱ) և ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) կանխարգելման և վերահսկման ծրագրի հանրային իրազեկման ռազմավարությունը:	
11.	Գյուղական շրջաններում տղամարդկանց և կանանց որակյալ բուժօգնության տրամադրման նպատակով հանրապետության 4 մարզերում (Արարատ, Արմավիր, Տավուշ, Լոռի) առողջության առաջնային պահպանման 5 կենտրոնի կառուցում և 1 կենտրոնի վերանորոգում, ինչպես նաև Մեղրու տարածաշրջանի բժշկական կենտրոնի կառուցման և Ալավերդու, Կապանի, Բերդի բժշկական կենտրոնների վերանորոգման աշխատանքների իրականացում՝ Երևան ուղեգրումները կրճատելու նպատակով:	Գյուղական շրջաններում տղամարդկանց և կանանց որակյալ բուժօգնության տրամադրման նպատակով հանրապետության 4 մարզերում (Արարատ մարզ-Քաղցրաշեն), (Արմավիրի մարզ-Ակնալիճ), (Տավուշի մարզ-Նովուզ, Բագրատաշեն), (Լոռու մարզ- Լեռնապատ), կառուցվել են առողջության առաջնային պահպանման 5 կենտրոն, վերանորոգվել և շահագործման է հանձնվել Ալավերդու բժշկական կենտրոնը: 2014 թվականի ընթացքում կատարվել են շինարարական լայնածավալ աշխատանքներ և 2015 թվականի ընթացքում շահագործման կհանձնվեն Կապանի, Բերդի և Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնները, որոնք կկրճատեն Երևան կատարվող ուղեգրումները՝ ապահովելով բուժօգնությունից օգտվելու հավասար պայմանները տղամարդկանց և կանանց համար անկախ բնակության վայրից:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
12.	Կանանց արգանդի վզիկի վաղ ախտորոշման և վարման ուղեցույցներ վերանայում՝ պարզեցնելով սկրինինգային համակարգը և բարձրացնելով թիրախային խմբի կանանց ընդգրկվածությունը:	ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտի հետ կնքված պայմանագրի շրջանակներում վերամշակվել են «Արգանդի պարանոցի նախաքաղցկեղային վիճակների վաղ հայտնաբերում, վարում և քաղցկեղի կանխարգելում» գործնական ուղեցույցները մանկաբարձ-գինեկոլոգների և բժշաբանների համար, որոնք հաստատվել են ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի ապրիլի 16-ի թիվ 810-Ա հրամանով: Գնահատվել են ՀՀ մարզերի և Երևան քաղաքի լաբորատոր ստորաբաժանումների կարիքները՝ Պապանիկալուի մեթոդով բժշաբանական հետազոտության իրականացման նպատակով: Ծախսարդյունավետությունից ելնելով նախատեսվում է ՀՀ մարզերի և	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ

		Երևանի 27 բժշկական հաստատություններում կենտրոնացնել բջջաբանական հետազոտությունները: Մշակվել են արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելման ծրագրում ընդգրկվածության բարձրացման նպատակով տեղեկատվական թերթիկներ, նշելով այդ հետազոտությունների անվճար իրականացման մասին:	
13.	ՄԻԱՎ /ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված տեղեկատվական-իրազեկման միջոցառումներ իրականացում՝ ներգրավելով հասարակական կազմակերպությունները և ՀԼՄ-երը:	ՁԻԱՀ-ին առնչվող հիշարժան օրերի՝ ՁԻԱՀ-ից մահացածների հիշատակի օրվա և ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվա շրջանակներում կազմակերպվել և անցկացվել են մի շարք միջոցառումներ, որոնք լայնորեն լուսաբանվել են ՀԼՄ-ներով: Լրատվամիջոցները պարբերաբար տեղեկատվություն են տրամադրել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին առնչվող խնդիրների վերաբերյալ: Թերթերում, ամսագրերում, էլեկտրոնային լրատվական կայքերում, սոցիալական ցանցերում տպագրվել և տեղադրվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին առնչվող նյութեր: Պատրաստվել և հեռարձակվել են հեռուստա-ռադիոհաղորդումներ, սոցիալական գովազդներ:	Ֆինանսավորում չի պահանջվել
14.	Առողջ ապրելակերպի, ծխելու դեմ պայքարի և անվտանգ սեռական կյանքի վերաբերյալ քարոզչության ծրագրերի մշակում և իրականացում:	Մշակվել և ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի նիստի N 50 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Առողջ ապրելակերպի խթանման» ռազմավարական ծրագիրը, որտեղ նախատեսված են առողջ ապրելակերպի, ծխելու դեմ պայքարի և անվտանգ սեռական կյանքի վերաբերյալ, այդ թվում քարոզչական միջոցառումների իրականացում:	Ֆինանսավորում չի պահանջվել
ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն			
15.	ՀՀ ԱԻՆ պաշտոնական կայքում և «Արտակարգ թերթում» արտակարգ իրավիճակներում գենդերային խնդիրների վերաբերյալ նյութերի տեղադրում:	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնական կայքում և «Արտակարգ թերթում» պարբերաբար տեղադրվել են կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնախնդիրների մասին իրազեկող նյութեր՝ հասարակության լայն շերտերի համար:	Ֆինանսավորում չի պահանջվել
16.	Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների քարտեզագրում և համագործակցության մեխանիզմների մշակում:	Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնահարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների՝ այդ թվում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ԵՄ պատվիրակության, Եվրոպական խորհրդի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ԵԱՀԿ-ի, ՕԲՍՖԱՄ-ի, Առողջապահության համաշխարհային կազմակերպության, Ասիական զարգացման բանկի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, Միգրացիայի համաշխարհային կազմակերպության հետ, որպես համագործակցության մեխանիզմ ընտրվել է «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլանֆորմ» հիմնադրամի և ազգային գենդերային թեմատիկ աշխատանքային խմբերի ձևաչափը:	Ֆինանսավորում չի պահանջվել

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն			
17.	Կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը, աղքատության հաղթահարմանը և շուկայական հարաբերություններում մրցակցային միջավայրի ձևավորմանն ուղղված միջոցառումների իրականացում:	1. Կանանց ձեռներեցությանն աջակցության ուղղությամբ՝ - աշխատանքներ են տարվել կանանց ձեռներեցության զարգացման ռազմավարության մշակման ուղղությամբ. մշակվել է ռազմավարության գործողությունների պլանը, որը ներկայացվել է պետական, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների քննարկմանը՝ կայացած աշխատանքային հանդիպման ընթացքում; - ՀՀ Շիրակի մարզի Գյումրի և ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքներում կազմակերպվել են աշխատանքային հանդիպումներ արտադրության և ծառայության ոլորտներում գործող 27 գործարար կանանց հետ; - իրականացվել են կանանց ձեռներեցության ներուժի բացահայտմանն ուղղված ուսումնասիրություններ ՀՀ Լոռու և Վայոց Ձորի մարզերի զբոսաշրջության արժեշղթայում; - իրականացվել են աշխատանքներ կին գործարարների կարիքների ուսումնասիրության ուղղությամբ, որի նպատակն է բացահայտել կին գործարարներին տրամադրվող աջակցության ուղղությունների արդյունավետությունը, հստակեցնել ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս նրանց մոտ առաջացող խնդիրները և առաջարկել դրանց հաղթահարման հնարավոր ուղիները; - ՀՀ տնտեսական զարգացման բնագավառում կանանց ձեռնարկատիրական գործունեության խրախուսման, տնտեսության տարբեր ճյուղերում կին գործարարների նվաճումներն ըստ արժանվույն գնահատման, հանրահռչակման և սատարման նպատակով իրականացվել է ՀՀ վարչապետի կողմից հայտարարված «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխություն՝ 6 անվանակարգերով. «Լավագույն կին գործատու», «Լավագույն կին նորարար», «Լավագույն կին բարեգործ», «Լավագույն ապրանքանիշ», «Լավագույն երիտասարդ կին գործարար» և «Լավագույն սկսնակ կին գործարար»: Մրցանակաբաշխության կազմակերպչական աշխատանքներն իրականացվել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից: Ընդհանուր առմամբ ներկայացվել է 182 հայտ, որոնցից 37-ը՝ Երևանից և 145-ը՝ ՀՀ մարզերից: Մրցութային հանձնաժողովի կողմից յուրա-քանչյուր անվանակարգի համար շնորհվել է 2-ական մրցանակ՝ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի լավագույն կին գործարարներին: 2. Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության շրջանակներում՝ - մեկնարկել և ընթացքի մեջ է աջակցության 26 ծրագիր: Աջակցություն է ցուցաբերվել ՀՀ Գեղարքունիքի, ՀՀ Լոռու, ՀՀ Տավուշի, ՀՀ Շիրակի, ՀՀ Կոտայքի, ՀՀ Արագածոտնի, ՀՀ Արարատի, ՀՀ Արմավիրի, ՀՀ Սյունիքի, ՀՀ Վայոց Ձորի մարզերի և Երևան քաղաքի 537 սկսնակ գործարարի, որոնցից	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ

		193-ը (35.9%) կին գործարարներ են: - «Կանանց ձեռներեցության զարգացում» ծրագրի շրջանակներում իրականացվել է սկսնակ գործարարների աջակցության դասընթացներ ՀՀ Վայոց Ձորի, ՀՀ Կոտայքի, ՀՀ Գեղարքունիքի և ՀՀ Արագածոտնի մարզերում և Երևան քաղաքում, որին մաս-նակցել են 108 սկսնակ գործարարներ, որոնցից 59-ը (54.6%)՝ կին գործարարներ են; - Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցության ուղղությամբ գործընկեր «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի միջոցով ֆինանսական (վարկային) աջակցություն է ցուցաբերվել առավել իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած 217 սկսնակ գործարարի, այդ թվում՝ 72 սկսնակ կին գործարարի: 3. ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության շրջանակներում գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն է ցուցաբերվել Երևան քաղաքում և ՀՀ մարզերում գործող և սկսնակ 11960 ՓՄՁ սուբյեկտի, այդ թվում՝ 3646՝ կին գործարարի: 4. ՓՄՁ սուբյեկտներին գործարար ուսուցողական (տեղեկատվական) աջակցության շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել Երևան քաղաքում և ՀՀ մարզերում գործող և սկսնակ 393 ՓՄՁ սուբյեկտի, այդ թվում՝ 188 կին գործարարի:	
ՀՀ ոստիկանություն			
18.	Կրթության և գիտության պետական քաղաքականության մեջ կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ բաղադրիչի ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացում:	2014 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով ծառայության կողմից ՀՀ տարածքում գործող դպրոցներում պարբերաբար կազմակերպվել և անց են կացվել հանդիպումներ, զրույցներ աշակերտների հետ տարբեր իրավական թեմաներով: Հանդիպումների, զրույցների ընթացքում անդրադարձ է կատարվել նաև «Հասարակությունում սեռի հատկանիշով բռնության երևույթի հանդեպ անհանդուրժողականության միջավայրի ձևավորմանը, սեռի հատկանիշով բռնությանը նպաստող կարծրատիպերի վերացմանը և սեռի հատկանիշով բռնության մասին իրազեկման բարձրացմանը»: 2014 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանության և «Փի Էյչ Ինթերնեյշնլ» («Project Harmony») միջազգային հասարակական կազմակերպության և ԱՄՆ Պետդեպարտամենտի միջև համագործակցության, Ֆրանսիայի հանրապետության ներքին գործերի նախարարության հետ իրականացվող 2014 թվականի գործողությունների ծրագրի, ինչպես նաև Ձինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևի կենտրոնի հետ կնքված տարեկան համագործակցության ծրագրի շրջանակներում, ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով թվով 97 ծառայողի համար	Ֆինանսավորում չի պահանջվել

		կազմակերպվել և անց են կացվել վերապատրաստման դասընթացներ:	
ՀՀ Կոտայքի մարզպետարան			
19.	Մարզային և համայնքային մակարդակներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության մշակման իրականացման արդյունավետության բարձրացմանը, այդ աշխատանքների համակարգմանն ու մշտադիտարկմանն ուղղված միջոցառումների իրականացում:	1. Մարզպետարանում կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման նպատակով հրավիրվել է չորս նիստ, ամփոփվել կատարված աշխատանքները, կազմվել է կիսամյակային հաշվետվություն և համապատասխան արձանագրություններ: «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի» շրջանակներում կանանց վերարտադրողական առողջությունը և ծննդօգնության բուժհաստատությունների կարողությունները բարելավելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշմամբ՝ անհատույց բաշխման ծրագրի շրջանակներում ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության աջակցությամբ «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ համալրվել են անհրաժեշտ սարքավորումներով: «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի միջև ստորագրված պայմանագրի, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով բուժաշխատողների կատարելագործման նպատակով ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտում անցկացվել է «ՄԻԱՎ վարակ» թեմայով 5-օրյա դասընթացներ: 2. Մարզում կանանց և տղամարդկանց իրավահավասարության առկա վիճակի գնահատման և մշտադիտարկման ապահովմանն ուղղված լուսաբանման աշխատանքների առումով Կոտայքի մարզպետի նախաձեռնությամբ մարզպետարանում 04.03.2014թ. տեղի է ունեցել հանդիպում մարզի համայնքների ավագանու կին անդամների հետ: Հանդիպման ընթացքում կարևորվել է հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների խթանման գործընթացը և կանանց դերակատարությունը տեղական ժողովրդավարական գործընթացներում: Ընդգծվել է մարզպետարանում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների միջև	Ֆինանսավորում չի պահանջվել

		համագործակցության կարևորությունը: Աշխատանքային փորձի փոխանակման առումով առաջարկվել է հանդիպումները դարձնել շարունակական և կազմակերպել մարզի տարածաշրջաններում՝ ընդգրկելով ավելի շատ համայնքներ: «Կին առաջնորդ» ֆորումի համակարգող խորհրդի կողմից «Հայաստանի մարզերում ենթահանձնաժողովներ ստեղծելու» ծրագրի շրջանակներում կայացել է հանդիպում, որտեղ ներկայացվել և քննարկվել է առաջիկա ծրագրերը, առաջարկվել ստեղծել կանանց մարզային խորհուրդ «Կին առաջնորդ» և նախանշվել հետագա համագործակցության քայլերը և անելիքները (06.05.2014թ.): 3. Իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ «Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխության անցկացման համար: Մրցանակաբաշխության հայեցակարգը, մրցանակների շնորհման կարգը և մասնակցության հայտի ձևը շրջաբերական նամակի միջոցով (07.03.2014թ.) ուղարկվել է մարզի բոլոր համայնքների ղեկավարներին, միաժամանակ այն տեղադրվել է Kotayk.gov.am կայք էջի հայտարարությունների բաժնում: Մրցանակաբաշխության մասնակցության ներկայացված 6 քաղաքային (Հրազդան, Եղվարդ, Բյուրեղավան, Չարենցավան, Աբովյան, Ծաղկաձոր) և 7 գյուղական (Նոր Գեղի, Լեռնանիստ, Բջնի, Պտղնի, Վերին Պտղնի, Արզական, Ջովունի) համայնքների հայտերով: Ամփոփվել է «Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» ՀՀ Վարչապետի մրցանակաբաշխության 2014թ. մարզի համայնքների կողմից ներկայացված հայտերի արդյունքների հիման վրա անցկացված մարզային փուլը: Մարզպետարանում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի 20.03.2014թ. նիստում քննարկվել է ներկայացված հայտերը և առաջարկվել տարածքային կառավարման նախարարություն ներկայացնել մարզի 3 քաղաքային և 2 գյուղական համայնքների մրցույթի մասնակցության հայտերը: Որոշվել է՝ «Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» վարչապետի մրցանակաբաշխությանը ներկայացնել ՀՀ Կոտայքի մարզի հետևյալ՝ Հրազդան, Եղվարդ, Բյուրեղավան քաղաքային և Նոր Գեղի, Լեռնանիստ գյուղական համայնքների հայտերը: «Լավագույն քաղաքային համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» անվանակարգում ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքային համայնքը հաղթող է ճանաչվել: 4. Համայնքային խնդիրների վերլուծության համատեքստում կանանց և	
--	--	---	--

		տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների վերաբերյալ մեթոդական ուղեցույցը շրջաբերական նամակով ուղարկվել է համայնքապետարաններ՝ նշելով համայնքերում գենդերային հավասարության ապահովման ուղղությամբ առաջարկվող մոտեցումները՝ տեղերում քննարկումներ կատարելու և աշխատանքային խմբեր ձևավորելու համար: 5. Աբովյանի, Հրազդանի և Նաիրիի տարածաշրջանների համայնքների ղեկավարների խորհրդակցության ժամանակ (03.04.2014թ.) ներկայացրվել և քննարկվել է «Համայնքային խնդիրների վերլուծության համատեքստում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների վերաբերյալ մեթոդական ուղեցույցը»:	
20.	Հասարակությունում կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնահարցերի լուսաբանմանը, սեռի հատկանիշով խտրական գործելակերպի հաղթահարմանը և զանգվածային լրատվամիջոցներով դրանց տարածմանն ուղղված միջոցառումների իրականացում:	1. Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնախնդիրների վերաբերյալ մարզի ՀԼՄ-ներով (Հրազդան TV, Աբովյան TV) լուսաբանվել են կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության և սեռի հատկանիշով բռնության կանխարգելման 2011-2015թթ. պետական ծրագրերի շրջանակներում իրականացվող աշխատանքները (17.11.2014թ. Հարցազրույց Աբովյան TV մարզային հեռուստատեսությամբ)՝ մարզի ակտիվ կանանց և «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի» ներկայացուցիչների մասնակցությամբ, ինչպես նաև մարզպետարանում կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի կատարած աշխատանքների արձանագրությունները և դրանց վերաբերյալ տեղեկատվություն է տեղադրվել կայքի հայտարարություններ բաժնում: 2. Մարզի մշակութային հաստատություններից Աբովյանի երաժշտական դպրոցում 2014 թվականի նոյեմբերի 14-ին կազմակերպվել է «Կանանց և տղամարդկանց փոխհարաբերությունները ազգային արժեհամակարգում» թեմայով զրույց-բանավեճ: Մասնակցել են մարզի մշակութային հաստատությունների աշխատակիցներ, արվեստագետներ: Հոկտեմբերի 22-24 Հրազդանի, Կոտայքի և Նաիրիի տարածաշրջաններում տղամարդ ուսուցիչների հետ կազմակերպվել են սեմինար-պարապմունքներ: 3. Համայնքների աշխատակազմերում կազմակերպվել են քննարկումներ, ստեղծվել են աշխատանքային խմբեր կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության ապահովման ուղղությամբ համայնքներում միջոցառումների իրականացման և աջակցության տրամադրման համար:	Ֆինանսավորում չի պահանջվել
ՀՀ Լոռու մարզպետարան			
21.	Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնահարցերի լուսաբանմանը, սեռի հատկանիշով խտրական գործելակերպի հաղթահարմանը և զանգվածային լրատվամիջոցներով դրանց տարածմանն ուղղված միջոցառումների իրականացում:	Իրականացվել է հետազոտություն, ուսումնասիրվել է կանանց և տղամարդկանց ներկայացվածությունը ՏԻՄ կառույցներում մարզի բոլոր	ՀՀ պետական բյուջե, Օրենքով չարգելված այլ

	րության մշտադիտարկման և գնահատման, գործընկերային հարաբերությունների բարելավման մեխանիզմների ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացում:	տարածաշրջանների համար: Կազմակերպվել են հանդիպումներ ՏԻՄ-երում ընդգրկված կանանց հետ, նրանց հետ քննարկվել են ՏԻՄ-երում կանանց գործունեության ակտիվացման հնարավորությունները:	Ֆինանսավորման աղբյուրներ
22.	Կանանց և տղամարդկանց առողջության բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացում:	1.«ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային համաձայնագրով ՀՀ առողջապահության նախարարության ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում և մարզի առողջապահական ընկերություններում կազմակերպված վերապատրաստման դասընթացներին 2014 թվականին մասնակցել են 50 բժիշկներ և բուժքույրեր: 2. «Արգանդի պարանոցի քաղցկեղի (ԱՊՔ) վաղ հայտնաբերման և վարման» վերաբերյալ վերապատրաստման դասընթացներին մասնակցել են մանկաբարձ-գինեկոլոգներ, թերապևտներ, ընտանեկան բժիշկներ /109 մասնագետներ/: -Երևանում կազմակերպվող արգանդի պարանոցի նախաքաղցկեղային վիճակների և քաղցկեղի կանխարգելման հարցերի շուրջ բջջաբանական 5-օրյա դասընթացներին մարզից մասնակցել և վերապատրաստվել են 2 բջջաբաններ: 3. Առողջապահության նախարարության կողմից ՀՀ-ում անպտղության տարածվածությունը ուսումնասիրելու նպատակով Լոռու մարզում կատարվել են անպտուղ կանանց անվճար լաբորատոր հետազոտություններ /1փուլ/:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
23.	Կրթության և գիտության պետական քաղաքականության մեջ կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ բաղադրիչի ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացում:	1. Կազմակերպվել է «Կանանց եւ տղամարդկանց հավասարությունը որպես տեղական ժողովրդավարության նախադրյալ և համայնքների կառավարման արդյունավետության բարձրացման միջոց» դասընթացներ ՏԻՄ-երում: Մասնակիցներին հաղորդվել են գիտելիքներ քաղաքական և քաղաքացիական, մասնակցային ժողովրդավարության, համայնքների բյուջեների մշակման, քաղաքացիական նախաձեռնությունների կազմակերպման հմտություններ: Պարապմունքները վարել են հանրապետության պետական բուհերի դասախոսներ, մարզպետարանի և քաղաքապետարանի պատասխանատու աշխատողներ, հասարակական ոլորտի ակտիվ փորձագետներ: 2. Կազմակերպվել են «Կանանց և տղամարդկանց իրավահավասարություն» թեմայով սեմինար պարապմունքներ մարզի 7 տարածաշրջաններում՝	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ

		հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար:	
24.	Մարզային և համայնքային մակարդակներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության մշակման և իրականացման արդյունավետության բարձրացմանը, այդ աշխատանքների համակարգմանն ու մշտադիրակմանն ուղղված միջոցառումների իրականացում:	1. Լոռու մարզպետարանում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովը 2014 թվականին հրավիրել է թվով 7 նիստ, որտեղ ամփոփվել են 2013 թվականի ընթացքում կատարած աշխատանքները, ինչպես նաև 2014 թվականի կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության մշակման և իրականացման արդյունավետության բարձրացմանն ուղղված տարեկան միջոցառումների ծրագիրը: 2. Լոռու մարզում կանանց և տղամարդկանց իրավահավասարության առկա վիճակի գնահատման և մշտադիրակման ապահովման նպատակով մարզային հեռուստատալիքներով հեռարձակվել են տեսահոլովակներ, կազմակերպվել են կլոր սեղան-քննարկումներ իրազեկման բարձրացման նպատակով: 3. Հայաստանի Հանրապետության վարչապետի «Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» ամենամյա մրցանակաբաշխությանը ներկայացվել են Լոռու մարզի հետևյալ համայնքները՝ ք. Ալավերդի, ք. Ստեփանավան, գ. Մեղվահովիտ, որտեղ որպես լավագույն համայնք ճանաչվել է Ստեփանավան համայնքը և լավագույն համայնքի ղեկավար Մեղվահովիտ համայնքի ղեկավարը: 4. Կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման մեթոդական ուղեցույցի իրավական ամրագրումից հետո Լոռու մարզի համայնքներում աջակցություն է տրամադրվել համայնքների աշխատանքները արդյունավետ իրականացնելու ուղղությամբ: 5. Մարզխորհրդի քննարկմանը ներկայացվել են հարցեր կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության ուղղությամբ տարվող աշխատանքների ընթացքի վերաբերյալ, ներկայացվել են խնդիրներ կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնախնդիրների նկատմամբ համայնքների ղեկավարների կողմից տարվող աշխատանքների վերաբերյալ, առաջարկվել է բարձրացնել համագործակցության մակարդակը տեղական ՀԿ-ների հետ:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
25.	Հասարակությունում կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնահարցերի լուսաբանմանը, սեռի հատկանիշով խտրական գործելակերպի	1. Մշակվել և մարզի ԶԼՄ-ներով լուսաբանվել են /տեղադրվել են կայքում հոդվածներ, կազմակերպվել են հեռուստատեսային հաղորդումներ/ կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնախնդիրների վերաբերյալ: 2. Կազմակերպվել են «Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը որպես տեղական ժողովրդավարության նախադրյալ և համայնքների կառավարման արդյունավետության բարձրացման միջոց» թեմայով՝ Ալավերդի քաղաքում և «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ

	հաղթահարմանը և զանգվածային լրատվամիջոցներով դրանց տարածմանն ուղղված միջոցառումների իրականացում:	քաղաքականության իրականացումը համայնքների մակարդակում» թեմայով կլոր-սեղան քննարկումներ մարզի 8 քաղաքներում: 3. Հաշվի առնելով «Ժողովրդավարության ձևավորման հեռանկարները տեղական ինքնակառավարման համակարգում և կանանց մասնակցության ակտիվացման հիմնախնդիրները»՝ կազմակերպվել է մարզային համաժողով, որի նպատակն էր վերհանել տեղական ինքնակառավարման համակարգի բարելավման գործում կանանց մասնակցության ակտիվացման հիմնախնդիրները, քննարկել հասարակական կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների սոցիալական գործընկերության ձևավորման հեռանկարները, մշակել երաշխավորություններ քաղաքային և գյուղական համայնքներում հասարակական կյանքում կանանց քաղաքական ակտիվացման և կառավարման համակարգում կանանց դերի բարձրացման ուղղությամբ:	
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան			
26.	Մարզային և համայնքային մակարդակներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության մշակման և իրականացման արդյունավետության բարձրացմանը, այդ աշխատանքների համակարգմանն ու մշտադիրակմանն ուղղված միջոցառումների իրականացում:	Մարզպետի 2014 թվականի հունվարի 24-ի շրջաբերական գրությամբ առաջարկվել է համայնքների ղեկավարներին համայնքներում ներդնել պատասխանատու անձ՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության իրականացումն ապահովելու համար:	Ֆինանսավորում չի պահանջվել
27.	Կանանց և տղամարդկանց իրավահավասարության մշտադիտարկման և գնահատման, գործընկերային հարաբերությունների բարելավման մեխանիզմների ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացում:	Մարզի 6 համայնքներում կատարվել է կանանց և տղամարդկանց իրավահավասարության վիճակի ուսումնասիրություն, արդյունքները քննարկվել են մարզպետարանում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովում:	Ֆինանսավորում չի պահանջվել
28.	Կանանց քաղաքական գործընթացներում կանանց ներգրավվմանն ուղղված	2014 թվականի ընթացքում կազմակերպվել են. 1. սեմինար մարզի երիտասարդական կենտրոնում /երիտասարդ լիդերների դպրոց/,	Ֆինանսավորում չի պահանջվել

	միջոցառումների իրականացում:	2. թոք շոու՝ կին ավագանիների և տղամարդ համայնքապետերի մասնակցությամբ, 3. հանդիպումներ, կլոր-սեղան քննարկումներ, զրույցներ մարզի համայնքներում, 4. քարոզչական աշխատանքներ համայնքային ընտրություններում կանանց ներգրավման նպատակով:	
29.	Մարզխորհրդում քննարկման նպատակով «Մարզում գենդերային քաղաքականության ուղղությամբ տարվող աշխատանքների ընթացքը և խնդիրները» հարցի ներկայացում:	Մարզխորհրդում քննարկվել են հանձնաժողովի կողմից մարզում կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության ռազմավարական ծրագրի շրջանակներում 2014 թվականի ընթացքում կատարած աշխատանքների և առաջիկա անելիքների մասին /23.09.2014թ./:	Ֆինանսավորում չի պահանջվել
ՀՀ Արագածոտնի մարզպետարան			
30.	ՀՀ Արագածոտնի մարզպետարանում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի աշխատանքների կազմակերպում:	2014 թվականի ընթացքում հրավիրվել է մարզպետարանում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի 4 նիստ, քննարկվել են քաղաքային համայնքներում նման հանձնաժողովներ ստեղծելու, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների քաղաքականության իրականացման վերաբերյալ հարցեր: Հանձնաժողովի անդամները մասնակցել են քաղաքային համայնքներում ստեղծված հանձնաժողովների նիստերին և տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն:	Ֆինանսավորում չի պահանջվել
31.	Մարզի 4 տարածաշրջաններում համայնքապետարանների աշխատակիցների, ավագանու անդամների, ՀԿ-ների ներկայացուցիչների, լրագրողների համար կազմակերպել հանդիպումներ կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման պետական քաղաքականության իրազեկման, համայնքային	Մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժինը կազմակերպել է հանդիպումներ մարզի 20 համայնքներում իրազեկման և համայնքային բյուջեում գենդերային ուղղվածության ծրագրեր ներառելու համար:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ

	ծրագրերում կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության բաղադրիչները ներառելու նպատակով:			
32.	ՀՀ կառավարության սահմանած «Լավագույն համայնք՝ գենդերային ուղղվածությամբ» մրցույթի անցկացման պայմանների մասին մարզի համայնքապետերին իրազեկում մարզխորհրդի նիստում:	Ապահովվել է ՀՀ վարչապետի կողմից սահմանված «Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխության կարգի իրազեկումը, ՀՀ Արագածոտնի մարզպետարանում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովում քննարկվել են առաջին փուլի արդյունքները: Մրցութային հանձնաժողովին են ներկայացվել Հանձնաժողովի արձանագրությունը, հաղթող ճանաչված երկու քաղաքային և երեք գյուղական համայնքների ցուցանիշները և իրականացված միջոցառումների համառոտ նկարագրությունները:	Ֆինանսավորում պահանջվել	չի
33.	«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի ներկայացում:	Մարզպետարանում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի նիստում ներկայացվել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը: «Ժողովրդավարության և իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համագործակցելով 12 համայնքներում կազմակերպվել են դասընթացներ, քննարկումներ, իրազեկվել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման պետական քաղաքականության և իրավական ակտերի վերաբերյալ:	Ֆինանսավորում պահանջվել	չի
34.	Մարզի ամբուլատորիաների բժիշկների հետ հանդիպումների կազմակերպում՝ առողջապահության բնագավառում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնախնդիրների	Մարզի առողջապահական կառույցներում բուժաշխատողների հետ հանդիպումների ժամանակ քննարկվել են պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական ծրագրերում կանանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական ծառայություններ ստանալու իրավունքները և առողջ ապրելակերպի հիմնախնդիրները:	Ֆինանսավորում պահանջվել	չի

	բացահայտման նպատակով:		
35.	Մարզի հանրակրթական դպրոցների հասարակագիտության ուսուցիչների գենդերային գիտելիքների բարձրացման նպատակով «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի ներկայացում:	Հասարակագիտություն առարկայի ուսուցիչների գենդերային գիտելիքների բարձրացման նպատակով կազմակերպվել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի քննարկումներ, որին մասնակցել են 30 մանկավարժներ:	Ֆինանսավորում չի պահանջվել
36.	Մարզի քաղաքային համայնքների կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով զբաղվող հանձնաժողովների անդամների հետ հանդիպում՝ փորձի փոխանակման նպատակով:	Տարվա ընթացքում մարզային հանձնաժողովի անդամները մասնակցել են քաղաքային համայնքներում ստեղծված գենդերային հարցերով զբաղվող հանձնաժողովների 3 նիստերին, աջակցել նրանց խորհրդատվություններով և նախապատրաստական աշխատանքներ տարել մարզի խոշոր համայնքներում հանձնաժողով ստեղծելու և փորձի փոխանակման ուղղությամբ:	Ֆինանսավորում չի պահանջվել
37.	Մարզի ձեռներեց կանանց հետ հանդիպումների կազմակերպում՝ նրանց իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:	ՓՄՁ ԶԱԿ-ի, «Երիտասարդ կանանց ասոցացիայի» ՀԿ-ի և Արագածոտնի ԳԱՄԿ-ի մարզային գրասենյակի միջոցով տարվա ընթացքում մարզի ձեռներեց կանանց իրազեկվածության բարձրացման և փորձի փոխանակման նպատակով կազմակերպվել են 3 դասընթացներ, 2 ցուցահանդես մրցույթներ, փորձի փոխանակման հանդիպումներ, որոնց մասնակցել են շուրջ 50 կին: Ուսուցման արդյունքում 9 կին գրանցվել է որպես անհատ ձեռներեց և ներկայացրած գործարար ծրագրի հիման վրա վարկ ստացել:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
38.	Անչափահասների և նրանց ծնողների մասնակցությամբ կլոր-սեղան քննարկումների, «ՀՀ գենդերային ռազմավարությունը» թեմայով բաց դասերի կազմակերպում:	Բարձր դասարանի աշակերտների և ծնողների համար ՀՀ ոստիկանության անչափահասների բաժնի աշխատակիցների հետ մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժինը մարզի 11 համայնքներում կազմակերպել է 15 կլոր-սեղան քննարկում, 12 բաց դաս «ՀՀ գենդերային ռազմավարությունը» թեմայով:	Ֆինանսավորում չի պահանջվել
39.	Մարզի լրատվամիջոցներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և	Տարվա ընթացքում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության թեմայով մարզային թերթերում տպագրվել է 8 նյութ, իսկ մարզպետարանում կանանց	Ֆինանսավորում չի պահանջվել

	հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության լուսաբանում:	և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին տեղեկատվական նյութերը տեղադրվել են մարզպետարանի պաշտոնական կայքում:	
40.	Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հիմնահարցերի անհրաժեշտ տվյալների բազայի ստեղծում:	Համայնքապետարանների կողմից ներկայացրած տվյալների հիման վրա մարզպետարանում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի կողմից ստեղծվել է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հիմնահարցերի տվյալների մարզային բազա:	Ֆինանսավորում չի պահանջվել
ՀՀ Արարատի մարզպետարան			
41.	Քաղաքական և հասարակական կյանքում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հինխնդիրների հետազոտությունների իրականացում:	Տարվա ընթացքում իրականացվել են մարզում կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ շտեմարանի թարմացման աշխատանքներ:	Ֆինանսավորում չի պահանջվել
42.	Անվճար բուժօգնությունների կազմակերպում կանանց և տղամարդկանց առողջության բարելավման նպատակով:	Տարվա ընթացքում միջազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվել են անվճար բուժօգնություններ:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
43.	Կնոջ կողմից ղեկավարվող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների սոցիալական պաշտպանությանն ուղղված ծրագրերի իրականացում:	Մայրերի սոցիալական վիճակի բարելավման նպատակով իրականացվել են տարբեր մասնագիտությունների ուսուցման դասընթացներ:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
44.	Մարզի հաշմանդամ կանանց համակարգչային գիտելիքների ուսուցում:	«Սկարպ» Առողջության կենտրոն ՀԿ-ի հետ համատեղ կազմակերպվել է դասընթաց հաշմանդամ կանանց համար, 1 կին տեղավորվել է աշխատանքի:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
45.	ՀՀ Արարատի	2014 թվականի ընթացքում հրավիրվել է կանանց և տղամարդկանց	Ֆինանսավորում չի

	մարզպետարանում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի աշխատանքների կազմակերպում:	հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի 3 նիստ, որի ընթացքում քննարկվել են տարեկան ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման հարցերը:	պահանջվել
ՀՀ Արմավիրի մարզպետարան			
46.	Մարզի համայնքներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության ներդրման գործընթացի մշտադիտարկման և իրավիճակի շարժընթացի գնահատմանն ուղղված աշխատանքների իրականացում:	Համայնքներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության գործընթացի ներդրման նպատակով կազմակերպվել են հանդիպումներ, ուսուցողական դասընթացներ և դրանց իրականացման հետևողական աշխատանքների շնորհիվ կազմակերպված մշտադիտարկման արդյունքները գոհացուցիչ են:	Ֆինանսավորում չի պահանջվել
47.	Մարզային ենթակայության կազմակերպություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում /այդ թվում՝ համայնքների ղեկավարների աշխատակազմ/ կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում: Գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում կանանց մասնակցության հնարավորությունների	Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականությանն ուղղված աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով թվով 68 համայնքներում՝ ՀԿ-ների հետ համատեղ կազմակերպվել է բազմաթիվ հանդիպումներ, սեմինար պարապմունքներ, տրամադրվել է համապատասխան գրականություն և կազմակերպվել է բազմաթիվ միջոցառումներ: Այս բոլոր աշխատանքներում նկատելի էր գենդերային կարծրատիպի հաղթահարում, ճիշտ գիտելիք՝ ինչ է գենդերը: Գյուղական բնակավայրերում սոցիալ տնտեսական զարգացման գործընթացներում կանանց ակտիվ մասնակցության նպատակով անցկացվել են դասընթացներ գործարար կանանց հետ, ուղղորդել իրենց աշխատանքները ավելի նպատակային և արդյունավետ դարձնելուն:	Ֆինանսավորում չի պահանջվել

	ընդլայնմանն ուղղված միջոցառումների իրականացում:		
48.	Մանկավարժական կադրերի և աշակերտների շրջանում կանանց և տղամարդկանց իրավահավասարության իրազեկության ամրապնդման հետևողական միջոցառումների իրականացում, դպրոցի համակարգում հատուկ դասընթացների ներդրում:	Հանրակրթական դպրոցներում բազմաթիվ հանդիպումներ է կազմակերպվել մանկավարժական անձնակազմի հետ, որոնց ընթացքում ամրապնդվել է նրանց կանանց և տղամարդկանց իրավահավասարության գիտելիքները, որոնք հաղորդվում են նաև աշակերտներին, շուրջ 58 դպրոցների բարձր դասարաններում կազմակերպվել է հանդիպումներ աշակերտների հետ, լսել նրանց և ուսուցանել կանանց և տղամարդկանց իրավահավասարության հավասարակշռությունն ապահովող գիտելիքներ: Հանձնարարվել է տարբեր վերնագրերով շարադրություններ, որոնց միջոցով պարզ է դարձել մեր հետագա աշխատանքները և անհրաժեշտ նյութերի տրամադրումը:	Ֆինանսավորում չի պահանջվել
49.	Կանանց վերարտադրողական առողջության կանխարգելման և անհրաժեշտության դեպքում բուժման նպատակով գյուղական բժշկական ամբուլատորիաների միջոցով ուղղորդման և իրազեկման աշխատանքների իրականացում:	Մարզպետարանում, ինչպես նաև համայնքներում կազմակերպվել են սեմինարներ բուժ. աշխատողների հետ կանանց վերարտադրողական առողջության կանխարգելման նպատակով, այդ նպատակով իրականացվել է թվով 30 կանանց անհրաժեշտ բուժում, մարզպետի կողմից ստացել են ֆինանսական աջակցություն: Բարձրացվել է կանանց իրազեկվածության մակարդակը:	Ֆինանսավորում չի պահանջվել
50.	ԶԼՄ-ների միջոցով կանանց և տղամարդկանց սոցիալական հավասարության ձեռքբերման հարցում կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնախմբիկների լուսաբանման աշխատանքների իրականացում:	Ամրապնդելով համագործակցությունը ԶԼՄ-ների հետ ցուցադրվել են հաղորդումներ, որոնց ժամանակ լուսաբանվել են հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական ոլորտում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված քայլեր:	Ֆինանսավորում չի պահանջվել
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան			
51.	Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը հասարակական քաղաքական և տնտեսական ոլորտներում:	Մարզում կանանց հիմնահարցերով զբաղվող ՀԿ-ների, «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ-ի և ՏԻՄ-երում ընդգրկված կանանց հետ կազմակերպվել է կլոր-սեղան քննարկում:	Ֆինանսավորում չի պահանջվել
52.	Հասարակության տարբեր	Մարզպետարանի և «Վորլդ Վիժն» Հայաստան» ՀԿ-ի հետ կազմակերպվել	Ֆինանսավորում չի

	խմբերի, այդ թվում երիտասարդների և առավել խոցելի խմբերի շրջանում կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ ուսուցողական դասընթացների կազմակերպում:	են դասընթացներ, քննարկումներ մարզի դպրոցների մանկավարժական կոլեկտիվների և աշակերտների մասնակցությամբ, որոնց վերաբերյալ նյութերը հրաապարակվել են մարզային «Գեղամա աշխարհ» թերթում:	պահանջվել
53.	Կրթության և գիտության պետական քաղաքականության մեջ կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ բաղադրիչի ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացում:	Մարզպետարանում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի և «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցացիա» ՀԿ-ի հետ կազմակերպվել են «Կանանց և տղամարդկանց հավասարությունը որպես տեղական ժողովրդավարության նախադրյալ և համայնքների կառավարման արդյունավետության բարձրացման միջոց» թեմայով դասընթացներ ՏԻՄ-երի ներկայացուցիչների համար: Մասնակիցներին հաղորդվել են գիտելիքներ քաղաքական և քաղաքացիական, մասնակցային ժողովրդավարության ինչպես նաև համայնքային բյուջեների մշակման հմտությունների վերաբերյալ:	Ֆինանսավորում չի պահանջվել
54.	Մարզային և համայնքային մակարդակներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության մշակման և իրականացման արդյունավետության բարձրացման, այդ աշխատանքների համակարգմանն ու մշտադիտարկմանն ուղղված միջոցառումների իրականացում:	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովը 2014 թվականին ամփոփել է 2013 թվականի ընթացքում կատարած աշխատանքները և հաստատել է 2014 թվականի կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության մշակման և իրականացման արդյունավետության բարձրացմանը ուղղված տարեկան միջոցառումների ծրագիրը: Մարզից 5 համայնքներ ներկայացվել են Հայաստանի Հանրապետության վարչապետի «Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» ամենամյա մրցանակաբաշխությանը:	Ֆինանսավորում չի պահանջվել
55.	«Կանանց և տղամարդկանց իրավահավասարության շրջանակներում անհավասարությունը և բռնությունը որպես ներընտանեկան կոնֆլիկտների և	Մարզպետարանի և «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ մարզի համայնքներում անցկացվել են սեմինար քննարկումներ ընտանեկան բռնության ենթարկված անձանց շրջանում «Կոնֆլիկտների կանխարգելում, ուղղորդում, ապաստարանների տրամադրում» թեմաներով:	Ֆինանսավորում չի պահանջվել

	ամուսնալուծությունների պատճառ» թեմայով զեկույցների ներկայացում:		
56.	Հասարակությունում «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության» հիմնահարցերի լուսաբանմանը, սեռի հատկանիշով խտրական գործելակերպի հաղթահարմանը և զանգվածային լրատվամիջոցներով դրանց տարածմանն ուղղված միջոցառումների իրականացում:	Մշակվել և մարզի ԶԼՄ-ներով թողարկվել են /տեղադրվել են կայքում հոդվածներ, կազմակերպվել են հեռուստատեսային հաղորդումներ /կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնախնդիրների վերաբերյալ հաղորդաշարեր:	Ֆինանսավորում չի պահանջվել
ՀՀ Շիրակի մարզպետարան			
57.	Գենդերային գիտելիքների հաղորդմանը և գենդերային զգայունության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:	Մարզի 10 համայնքներում իրականացվել են իրազեկման աշխատանքներ. Կազմակերպվել են կլոր-սեղան քննարկումներ «Գենդերային կարծրատիպերի հաղթահարումը և հասարակության վերաբերմունքը», «Գենդերային թեմատիկան ազգային մշակույթում» թեմաներով:	Ֆինանսավորում չի պահանջվել
58.	«Կանանց դերի բարձրացում ժողովրդավարական գործընթացներում» թեմայով դասընթացների կազմակերպում:	Կազմակերպվել են քննարկումներ մարզի 15 քաղաքային և խոշոր գյուղական համայնքներում ՏԻՄ և համապետական ընտրություններում կանանց իրավահավասարության և մասնակցության ակտիվացումն ապահովելու նպատակով:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
59.	Կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը, աղքատության հաղթահարմանը և շուկայական հարաբերություններում մրցակցային միջավայրի ձևավորմանն ուղղված միջոցառումների	ՀՀ պետական բյուջեով իրականացվող ծրագրերի շրջանակում 2014 թվականի ընթացքում աշխատանքի է տեղավորվել 738 մարդ, որից 423-ը՝ կին, աշխատանքային պրակտիկայում ընդգրկվել է 25 աշխատանք փնտրող: Սահմանափակ կարողությունների տեր 21 անձ ընդգրկվել է պետական տարբեր ծրագրերում, նրանց համար իրականացվել է աշխատանքային պայմանների բարելավում: Կազմակերպվել են դասընթացներ սահմանափակ կարողությունների տեր 500 անձի համար իրազեկվածության բարձրացման նպատակով, կազմակերպվել է «Ես էլ ունեմ մայրանալու իրավունք» ֆիլմի շնորհանդեսը	ՀՀ պետական բյուջե Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ

	իրականացում:	Գյումրու Կինոհոկտեմբեր սրահում՝ հանրապետության տարբեր մարզերի կազմակերպությունների և ֆիլմի հերոսների /երեխաների հետ/ մասնակցությամբ: 40 անձանց համար, որից 24-ը կին՝ իրականացվել է մասնագիտական ուսուցում:	
60.	Կանանց առաջնորդության դերի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում:	25 կնոջ համար կազմակերպվել է դասընթաց «Լիդերության դպրոց» ծրագրով, նրանց տրամադրվել է համապատասխան հավաստագիր:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
ՀՀ Տավուշի մարզպետարան			
61.	Մարզում կանանց և տղամարդկանց իրավահասարկության քաղաքականության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում:	1. Մարզի 4 հանրակրթական դպրոցների տնօրենների համար /Իջևանի թիվ 3, թիվ 5, Դիլիջանի թիվ 6, Նոյեմբերյանի թիվ 2/ փետրվար-մարտ ամիսներին կազմակերպվել են խորհրդակցություններ «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության» թեմայով: 2. Մարզի 5 համայնքներում /Իջևան, Գետահովիտ, Թեղուտ, Աջաջուր, Այգեհովիտ/ ապրիլ-մայիս ամիսներին կազմակերպվել են կլոր սեղաններ, քննարկումներ «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության» թեմայով: Մասնակիցներին տրամադրվել են տեղեկատվական նյութեր: 3. «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության» հիմնախնդիրները լուսաբանելու նպատակով տարվա ընթացքում մարզի քաղաքային հեռուստաալիքներով պարբերաբար հեռարձակվել են հաղորդումներ, տեղադրվել են գովազդային հոլովակներ, մամուլում տեղադրվել են կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող նյութեր:	Ֆինանսավորում չի պահանջվել
62.	ՀՀ Տավուշի մարզպետարանում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի աշխատանքների կազմակերպում:	Եռամսյան կը մեկ հրավիրվել են մարզպետարանում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի նիստեր, կազմվել են արձանագրություններ, հաշվետվություններ:	Ֆինանսավորում չի պահանջվել
63.	Կրթության ոլորտի գենդերային հիմնախնդիրների վերահանում և լուծման ուղիների	Սեպտեմբեր-հեկտեմբեր ամիսներին «Կրթության ոլորտի գենդերային հիմնախնդիրները» թեմայով մարզի 2 քաղաքների 4 դպրոցների /Իջևանի թիվ 3, թիվ 4, Նոյեմբերյանի թիվ 2, թիվ 3/ 40 ուսուցիչների շրջանում	Ֆինանսավորում չի պահանջվել

	մշակում:	կազմակերպվել են սեմինար պարապմունքներ:	
ՀՀ Սյունիքի մարզպետարան			
64.	Մարզի 10 համայնքների ավագանու անդամների համար դասընթացների կազմակերպում՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության թեմայով:	Համագործակցելով մարզում գործող ՀԿ-ի հետ, կազմակերպվել է դասընթացներ ավագանու անդամների իրազեկվածությունը բարձացնելու նպատակով:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
65.	Մարզի չաշխատող կանանց շրջանում սոցիալական պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացում:	Համագործակցելով «Կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ-ի հետ դասընթացների միջոցով չաշխատող կանայք ձեռք բերեցին նոր հմտություններ և կարողություններ /կավագործություն, գորգագործություն, սեղաների ձևավորում, կար ու ձև/:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
66.	Մարզում գործող զանգվածային լրատվական միջոցներով /մամուլ, հեռուստատեսություն/ Կանաց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության լուսաբանում:	Մարզային լրատվամիջոցներով Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության թեմաներով կազմակերպված դասընթացների, քննարկումների լուսաբանում հանրությանը:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
Երևանի քաղաքապետարան			
67.	Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնախնդիրների լուսաբանմանն ուղղված միջոցառումների իրականացում:	1. Երևան քաղաքի վարչական շրջանների կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովների հետ պարբերաբար կազմակերպվել են 2014 թվականի ծրագրի շրջանակներում իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ քննարկումներ, անցկացվել առկա խնդիրների իրավիճակի գնահատում: 2. Երևանի քաղաքապետարանի ենթակայության հանրակրթական դպրոցների աշակերտների համար կազմակերպվել են քննարկումներ և զրույցներ: 3. Երևանի քաղաքապետարանի ենթակայության Ալ. Սպենդարյանի անվան երաժշտական դպրոցում, Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի, Երևան քաղաքի պատմության թանգարանի, Էրեբունի պատմահնագիտական արգելոց թանգարանի աշխատակիցների համար անցկացվել են կլոր սեղաններ, քննարկումներ: 4. Երևանի քաղաքապետարանի առողջապահական ընկերությունների	Ֆինանսավորում չի պահանջվել

		աշխատակիցների համար կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ: 5. Երևան քաղաքի սոցիալական ծառայությունների տարածքային բաժինների աշխատակիցների շրջանում կատարվել են քննարկումներ, հարց ու պատասխան բանավեճեր: 6. Երևան քաղաքի 12 վարչական շրջանների կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովների կողմից կազմակերպվել են սեմինարներ բնակչության խոցելի խմբերի համար: 7. Երևան քաղաքի Ավան վարչական շրջանում «Արևիկ» և «Տաթև» ՀԿ հաշմանդամ երեխաների ծնողների հետ կազմակերպվել են գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ զրույցներ, մասնավոր դեպքերի քննարկումներ: 8. Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի կայքէջում ստեղծվել է թեժ գիծ: 9. Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում գենդերային հիմնախնդիրներով զբաղվող աշխատանքային խմբի կողմից անցկացվել է զրույց-սեմինար 87 և 170 ավագ դպրոցների աշակերտների մասնակցությամբ: 10. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի կողմից երիտասարդների մասնակցությամբ կազմակերպվել են ֆորումներ: 11. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի թիվ 189 դպրոցում պատանի նկարիչների մասնակցությամբ կազմակերպվել է նկարչական ցուցահանդես:	
--	--	---	--